

ԼՈՒԻԶԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ԳԻ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԱՂՈԹՔԸ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ՝

Լիթխարի է Ներսես Շնորհալու դերն ազգային հոգեւոր գրականութեան ստեղծման եւ հարստացման գործում: Նրա կրոնափիլիսոփայական երկերն արժեւորել եւ համակողմանի քննել են տասնյակ գիտնականներ, թարգմանել աշխարհի տարբեր լեզուներով² իր արժանի տեղը հատկացնելով համաշխարհային գրական-մշակութային գանձարանում³:

Ուսումնասիրության առանցքում «Հաւատով խոստովանիմ»-ի բնագրի եւ դրա թարգմանությունների (մասնավորապես ռուսերեն, անգլերեն, իտալերեն) համեմատությունն է: Նշենք, որ թարգմանությունները ոչ թե դիտարկվում են համարժեք/անհամարժեք ընկալումների լույսի ներքո, այլ վերլուծվում են «մշակութային փոխանցման» եղանակի կիրառմամբ⁴: «Մշակութային փոխանցման» հիմքում լեզվամշակութային միավորի անցում է տարածաժամանակային մեկ տիրույթից մյուսին: Ելնելով այն անքննելի դրույթից, որ չկա բացարձակ համարժեք թարգմանություն՝ «մշակութային փոխանցում»-ը թարգմանությունը որակում է որպես բարդ գործընթաց, որն անցնում է այսպես կոչված «մշակույթների խառնարանով»: Ըստ այդմ՝ թարգմանական

¹* Ստացվել է՝ 16.09.2023, գրախոսվել է՝ 23.09.2023:

Էլ. հասցէ՝ luisa.gasparyan83@gmail.com:

² Տէս ՇԱՀԵ ԱՐՔ. ԱՃԵՄՅԱՆ, Շնորհալին օտար թարգմանությամբ, «Էջմիածին», ԺԲ., 1973, էջ 44–48:

³ Այս մասին մանրամասն տես ԳՐ. ՀԱՅՈՐՅԱՆ, Ներսես Շնորհալի, Երեւան, 1964:


⁴ Տէս Մ. ЭСПАНЬ, История цивилизаций как культурный трансфер (пер. с франц.; под общ. редакцией Е. Е. Дмитриевой), Москва: Новое Литературное Обозрение, 2018. Д. БАХМАН-МЕДИК, Культурные повороты. Новые ориентиры в науках о культуре (пер. с нем. С. Ташкенова), Москва: Новое литературное обозрение, 2017:

բնագիրը հանդես է գալիս՝ ա) որպես միատարր կառուցվածք՝ կազմված տարասեռ բաղադրիչներից (բնագրի մշակույթի եւ թարգմանվող երկի մշակույթի արվեստական բանամարտ (դիալեկտիկա)), կամ՝ բ) տեղի է ունենում բնագիր մշակույթի եւ թարգմանության մշակույթի միաձուլում՝ բնագրի մշակութային առանձնահատկությունների գերակայությամբ:

Թարգմանության գործընթացը ենթադրում է բնագրային եւ արտաբնագրային գործոնների մանրազնին քննություն: Անժխտելի է, որ «Հաւատով խոստովանիմ» երկն ունի եզակի կառուցվածք, որտեղ Ներսես Շնորհալին ներկայացնում է քսանչորս աղոթք՝ օրվա յուրաքանչյուր ժամի համեմատ: Աղոթքի բնագրային հյուսվածքն ունի տրամաբանական եւ կոռ համակարգ, որն աներկբայորեն կերտել է Շնորհալին: Բանն այն է, որ Ներսես Շնորհալին քաջահմուտ էր նաեւ բնական գիտություններում եւ Մխիթար Հերացու խնդրանքով, որն զբաղվում էր նաեւ աստղագիտությամբ, գրել է «Յաղագս երկնի եւ զարդուց նորա» քերթվածը: Ղեւոնդ Ալիշանը «Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատության մեջ նշում է, որ ըստ որոշ տեսաբանների՝ այս վսեմական գրվածքը հնագույն աղբյուրից է առաջ եկել, եւ Շնորհալին այդ գրվածքի հենքի վրա ստեղծել է «Հաւատով խոստովանիմ» երկը: Սակայն ինքը՝ Ալիշանը, հերքում է այդ վարկածը՝ ընդգծելով, որ Շնորհալին «մէկ գրչութեամբ» կամ մեկ օրում է ստեղծել աղոթքը. «Առանց մէկ ուրիշ լոյս ուզելու, բաց Ի Ճշմարիտ լուսոյն Քրիստոսէ»⁵: Այսպես՝ հիմք ընդունելով ակադեմիկոս Գ. Զահուկյանի՝ բնագրի կառուցվածքի նախօրինակը (մոդելը) կամ բանաձեւը՝ $a(A)b$ ⁶, աղոթքի կառուցվածքային ամբողջականությունից, ապա նաեւ իմաստաբովանդակային առանձնահատկություններից կարելի է բխեցնել հետեւյալ աղյուսակը:

⁵ ՂԵՒՈՆԳ ՎՐԳ. ԱԼԻՇԱՆ, նշ. աշխ., էջ 248–254:

⁶ ՏԷՄ Դ. ДЖАУКЯН, Универсальная теория языка: пролегомены к субстанциональной лингвистике, Москва, 1999, էջ 207–208:



Վերոնշյալ աղյուսակը ներկայացնում է «Հաւատով խոստովանիմ» աղոթքը հետեւյալ ձեւով. նախաբան (a) (առաջին հինգը՝ երկրպագության աղոթք), որոնցից առաջին երկուսը նվիրված են Սուրբ Երրորդությանն ու Միաստվածությանը, իսկ երրորդ, չորրորդ եւ հինգերորդ աղոթքները՝ Քրիստոսին: Բուն բնագրային հյուսվածքը (A) (վեցից մինչեւ քսաներկուսը), որը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի. ա) ապաշխարության աղոթքներ, բ) քսաներորդից սկսած՝ մարդու երկրային կյանքից խաղաղ հեռանալու խնդրանք-աղոթք, ինչպես օրինակ՝ ֆաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, զհոգին իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց Քոյ՝ ի կոչման աւուրն եւ հանգչել յուսով բարեաց, մի՛ մտանէր ի դատաստան ընդ ծառայիս Քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն: Վերջաբան (b) (աղոթք քսաներեք եւ քսանչորս) համապարփակ բոլորի համար՝ բարեկամների եւ օտարների, մեռյալների եւ ողջերի, թշնամիների եւ այլն: Եւ սրբերի բարեխոսության աղոթք:

«Հաւատով խոստովանիմ» աղոթքն առաջին անգամ լույս է տեսել 1616 թ. Լվովում՝ «Սաղմոս ի Դավթի» գրքում, այնուհետեւ՝ 1717 թ. Ամստերդամում՝ «Կարճառօտ ժամագիրք» ժողովածուում: Աղոթքի անդրանիկ գիրքը հրատարակվել է Վենետիկում 1690 թ.⁷:

⁷ Տէմ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Հաւատով խոստովանիմ, Երեւան, 2013, էջ VII:

Հայերեն տարբերակը՝ իտալերենի զուգահեռ թարգմանությունը, տպագրել է Տիմոթեոս արք. Գառնուկը 1690 թ. Պադուայում⁸, իսկ 1780 թ. Լոնդոնում տպագրվում է աղոթքի քառալեզու տարբերակը (հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն): Մինչև 1873 թ. «Հաւատով խոստովանիմ» աղոթքը թարգմանվում է ավելի քան 36 լեզվով: Ըստ Ղ. Ալիշանի՝ «այս հրաշալի աղօթս՝ ազգային սահմաններէ անդին անցէր է, եւ թերեւս քան զամենայն ազգաց առանձնական աղօթաբանութիւնս, որովհետեւ իրաճանաչ եւ երախտագէտ ազգայինք եւ բանասէրք այս դարուս սկզբէն վեր Ասիոյ եւ Եւրոպիոյ գրեթէ ամեն գլխաւոր լեզուօք (իբրեւ 36) թարգմաներ եւ հազարաւոր օրինակ սփռեր են»⁹:

Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» քերթվածի ուսերեն թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել 1786 թ. Գրիգոր Խաղարյանի՝ Սանկտ-Պետերբուրգում հիմնադրած տպարանում, իսկ 1830 թ. տասներկու լեզվով՝ Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանում¹⁰: «Հաւատով խոստովանիմ» աղոթքի ուսերեն տարբերակը մի փոքր դժվարամատչելի է ներկայիս ընթերցողի համար (պարունակում է հին սլավոներենի տարրեր): Սույն հոդվածի համար նախընտրել ենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի հայոց թեմի խմբագրած եւ իրենց կայքում տեղադրած աղոթքի ուսերեն ժամանակակից թարգմանությունը¹¹:

«Հաւատով խոստովանիմ» աղոթքի թարգմանիչների վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան¹², սակայն վստահաբար կարելի է ասել, որ Մխիթարյան միաբանության հայրերը հենց իրենք են ձեռնամուխ եղել աղոթքը թարգմանելուն մի քանի լեզուներով: Մխիթարյանների թարգմանական գործունեությունն աներկբայորեն ազգային մշակույթին նոր լիցքեր հաղորդելու նշանակություն ուներ, որը միտված էր մի կողմից հարստացնելու հայ մշակույթն ու գրականությունը, մյուս կողմից՝ աշխարհին ներկայացնելու հայ ժողովրդի գրական արվեստը:

⁸ ՂԵՒՈՆԴ ԿՐԴ. ԱԼԻՇԱՆ, նշ. աշխ., էջ 250:

⁹ Անդ, էջ 248–251:

¹⁰ Տե՛ս նաեւ «Ներսես Շնորհալի (հոդվածներ ժողովածու)», Երեւան, 1977, էջ 86–87:

¹¹ <https://havatamk.ru/труды-св-персеса-шнорали/>

¹² Ուսումնասիրության հիմքում երեւանի պետական համալսարանի հրատարակչության վերահրատարակած «Հաւատով խոստովանիմ» երկն է (Վենետիկ, 1871 թ.): Տե՛ս ՆԵՐՍԷՍ ԸՆՈՐՀԱԼԻ, Հաւատով խոստովանիմ, Երեւան, 2013, 606 էջ:

Շնորհալու երկերը թարգմանվել են անշուշտ թարգմանվելու կամ վերախմբագրվելու են հետագայում եւս՝ պայմանավորված ժամանակակից լեզուների հարաշարժ փոփոխությամբ։ Անխոս, թարգմանական արվեստը դժվարին գործընթաց է, որը պայմանավորված է շատ հանգամանքներով, եւ եթե անդրադարձ կատարենք Շնորհալու թարգմանություններին (իտալերեն, անգլերեն եւ ռուսերեն), ապա թարգմանությունները խնամքով են կատարված եւ ընթերցողին հասցնում են բնագրի բովանդակությունը՝ նկատի ունենալով լեզուների տարածաժամանակային հեռավորությունը, Շնորհալու դյուրին, բայց եւ բարդ լեզվամտածողությունը, հեղինակի անհատական ոճը։ Այդուհանդերձ՝ հարկ է նշել, որ տեղ-տեղ լեզվի հարաշարժ փոփոխությամբ թարգմանություններում կարելի է հանդիպել հնացած միավորների։ Բնագրի եւ թարգմանությունների համեմատական քննության համար ելակետային են համարվում թարգմանությունների համաժամանակայնությունն ու տարածաժամանակայնությունը։ Աղոթքում Շնորհալին գերապատվությունը տվել է խոսքի դյուրամատչելի արվեստին, ինչպես ինքն է նշում, «աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց»¹³։

Ակնհայտ է, որ թարգմանություններում տեղ-տեղ ներկայացված են ընթերցողի դավանանքին մոտ արտահայտություններ՝ համաձայն թարգմանվող լեզվի մշակութային եւ մտածական առանձնահատկությունների։ Այս իրողությունը հատկապես վերաբերում է հոգեւոր-կրոնական իրարկություններին, որոնք, ոչ թե տառադարձվում, այլ փոխակերպվում են տվյալ լեզվում առկա միավորներով, ինչպես՝ Յովհանն Մկրտիչ – *Иоанн Креститель, John the Baptist, san Giovanni Battista*։ Այդուհանդերձ՝ որոշ թարգմանչական հարցեր են առաջանում հայոց սրբերի անունները փոխակերպելիս։ Այսպես՝ աղոթքում Սուրբ Գրիգոր Լուսավորիչը թարգմանվում է որպես *Григор Просветитель, Gregory our Illuminator, Gregorio nostro Illuminatore*, թեեւ որոշ թարգմանիչներ հակված են ներկայացնելու Լուսավորիչ միավորը *Lusavorich* տառադարձմամբ։

Անշուշտ դյուրին չէ մեկ ուսումնասիրության շրջանակներում համադիր ներկայացնել աղոթքի ամբողջական թարգմանական սկզբունքներն ու օրինաչափությունները։ Թարգմանական մոտեցումների ռազմավա-

¹³ ՂԵՒՈՆԴ ՎՐԳ. ԱԼԻՇԱՆ, նշ. աշխ., էջ 249։

ըրությունը համակողմանի ընկալելու նպատակով բերենք մի քանի ակնառու օրինակ:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, եւ կատարեալի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնին, եւ Յովնաննու Մկրտչին, եւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ սրբոց առաքելոցն, եւ մարգարէիցն, եւ վարդապետացն, եւ մարտիրոսացն, եւ սրբոց հայրապետացն, եւ ճգնաւորացն, եւ կուսանացն, եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց:

Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն, անբաժանելի սուրբ Երրորդութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն: (ԻԴ.)

Господь восхвалимый!

Внемли мольбам раба Твоего

и исполни к добру прошения мои

заступничеством Пресвятой Богородицы, (святой Твоей Матери – Վենեաիկ հրատ.)

и Иоанна Крестителя,

и святого первомученика Стефана,

и святого Григора нашего Просветителя,

и святых апостолов и пророков,

учителей и мучеников,

патриархов и отшельников,

дев, подвижников и всех святых Твоих –

небесных и земных.

Слава и поклонение Тебе,

нераздельной Святой Троице Твоей

во веки веков. Аминь. (24)


O glorious Lord, receive the prayers of thy servant; and fulfill my petitions for my good, through the intercession of *the holy mother of God, and John the Baptist and the first martyr St. Stephen, and St Gregory our Illuminator*, and holy Apostles, Prophets, Doctors, Martyrs, Patriarchs, Hermits, Virgins, and all thy Saints in heaven and on earth. (24)

Glorioso Signore! Accettate I prieghi del vostro servo ed esaudite benignamente le mie domande, per intercession della *santissima vostra Genitrice, di san Giovanni Batista, di santo Stefano*

Protomartire, di san Gregorio nostro Illuminatore, de'santi Apostoli, Profeti, Dottori, Martiri, Confessori, Eremiti, Vergini e di tutti I Santi del Cielo e della terra. (24)

Ըստ էության՝ լեզվական դիտանկյունից Աստվածածին միավորն ամփոփում է հենց հունարեն Θεοτόκος – Theoto'kos, «Աստված» եւ «ծին» տարրերը: Ընդունված կարծիքի համաձայն՝ Որոգիներեն է առաջին անգամ գործածել Θεοτόκος – Theoto'kos եզրույթը¹⁴: Ընդ որում՝ Շնորհալու թարգմանություններում ակնհայտ ընդգծվում է Աստվածածին միավորի թարգմանության դավանական դիտանկյունը: Օրինակ՝ ռուսերենի Богородица-ն (հունարեն՝ Theoto'kos) ուղղափառ քրիստոնյաների ընկալումն է, իտալերենի vostra Genitrice-ն փոխառվել է լատիներենի Dei Genitrix կամ Deipara (բառացի՝ Աստծու ծնող) միավորից, իսկ անգլերենի Mother of God արտահայտությունը կարելի է դիտարկել երկակի. ա) լեզվական իրողություն – անգլերենում գոյություն չունի Աստվածածին՝ «Աստված» եւ «ծին» բառապատճենում, բ) արտալեզվական իրողություն – Անգլիայում գոյություն ունեւ բողոքականների եւ կաթոլիկ քրիստոնյաների պայքար, որն սրացել էր հատկապես Թյուդորների օրոք, որի հետեւանքով, հավանաբար, բաց է մնացել որոշ հոգեւորկրոնական միավորների հստակ բառաստեղծում, օրինակ՝ գերմանական ճյուղի լեզվաավանդույթին մոտ են Mutter Gottes, Gottesmutter, Mother of God, the blessed / holy virgin Mary տարբերակները: Նշենք, որ կալվինիստները խուսափում են կիրառել Աստվածածին միավորը՝ հետեւելով այն գաղափարին, ըստ որի՝ Սուրբ Կույսի ընկալումը քրիստոնյաների համար պետք է դիտարկվի ոչ թե Theoto'kos (Աստվածածին), այլ Christotokos (Քրիստոսածին), որը, անշուշտ, հետագայում հերքվել է կամ հանգեցրել է սուր վեճերի: Ընդ որում՝ վենետիկում տպագրված ռուսերեն տարբերակում Աստվածածին միավորը եւս թարգմանվել է святой Твоей Матери – Սուրբ Մայր: Փաստորեն Ա. դարի կեսին Աստվածամայր եւ Աստվածածին եզրույթները լայն տարածում են ստացել, սակայն դրանք նաեւ սուր վիճաբանությունների եւ անհաշտ պայքարի են մղել «Քրիստոսածին–մարդածին» գաղափարի շուրջ, որը հերքվել է 431 թ.՝ Եփեսոսի Գ. տիեզերական ժողովից հետո:

¹⁴ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 702-703:



Հետաքրքիր է, որ հայերենում Աստվածածին (նկատի ունենք հենց «Աստված ծնող մաքրամաքուր էություն» իմաստը) միավորն ունի ավելի քան ինը տարբերակ (Աստվածամայր, Տիրամայր, Տիրածին, Տիրուհի, Էածին, Կուսածին, Մայր Աստվածածին, Մարիամ Աստվածածին), ռուսերենում՝ մոտ քսան (Богоматерь, Всецарица, Божия Матерь, Пресвятая Дева, Госпоженка, Богородительница, Девоматерь, Владычица, Царица Небесная, Дева Мария, Богоотроковица, Матерь, Божья Матерь, Пречистая, Пречистая Богородица, Пречистая Дева, Приснодева, Мария, Мадонна, Господородительница), անգլերենում եւ իտալերենում գրեթե նույն տարբերակներն են՝ հիմք ընդունելով, որ մինչեւ ժե. դարն Անգլիայում ժողովրդի գերակշիռ մասը կաթոլիկ էր (Blessed Virgin Mary, Mary, Mother of our Lord, Virgin Mary, Madonna, the Virgin): Իտալերենում առկա են նաեւ Santissima Vergine Maria, Santa Deipara, Genitrice, Madonna տարբերակները:

Ներկայացնենք հաջորդ օրինակը՝

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան ողպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան

զեւանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: (ՓՀ.)

Источник бессмертія! Вызови из моего сердца слезы истинно покаяныя, какь нькогда у *грешницы*, и я омою нечистоту моей души, прежде чемь выйду из этого міра. (18)

Источник бессмертия!
Источай слезы раскаяния из сердца моего,
как из *блудницы*,
дабы омылись грехи мои
прежде моего ухода из этого мира.
И помилуй Твои создания
и меня многогрешного.
(Թարգմ.՝ ռուսահայոց թեմի)

Fountain of immortality, cause the tears of repentance to flow from my heart, as from *Mary Magdalene*, that I may wash away the sins of my soul, before I depart this world. Have mercy on thy creatures, and on me a grievous sinner. (18)

Fonte d'immortalita'! Fate sgorgare dal mio cuore lagrime di penitenza, come dalla *peccatrice*, affinche' io lavi I iei peccati, pria di partire da questo mondo. Ed abbiate misericordia delle vostre creature, e di me gran peccatore. (18)

Եթե պոռնկին միավորը ռուսերեն երկու տարբերակներում էլ ներկայացվում է որպես *блудница*, մյուս՝ ավելի վաղ թարգմանված տարբերակում՝ որպես *грешница*, իսկ իտալերենում՝ *peccatrice*՝ մեղսագործ, ապա անգլերեն թարգմանություն մեջ նկատում ենք *Mary Magdalene* – Մարիամ Մագդաղենացի միավորը: Հենց այս պարագայում է նկատելի բնագրային «մեկնաբանական բեկում»՝ համաձայն ընդունող մշակույթի արժեհամակարգի:

Հստ ՆՀԲ-ի՝ պոռնիկ-ը կարող է վերաբերել է եւ արական, եւ իգական սեռի ներկայացուցիչներին. «Որ խառնակի ընդ այլում, ընդ որում չէ ամուսնացեալ օրինօք՝ եթէ այր իցէ եւ եթէ կին» եւ այլն (էջ 659): Բնագրի բովանդակային շերտը համարժեք թարգմանելու համար անգլերեն տարբերակում թարգմանիչը կիրառել է *Mary Magdalene* – Մարիամ Մագդաղենացի միավորը: Բանն այն է, որ եթե ռուսերենն ու իտալերենն

ունեն սեռի կարգ՝ *блудница, грешница* (жен. род), *peccatrice* (f. g), ապա անգլերենում այդ կարգը բացակայում է, հավանաբար գուցե *Mary Magdalene* – Մարիամ Մագդաղենացի ընտրությունն անգլերեն տարբերակում պայմանավորված է նաեւ այդ հանգամանքով:

Մի շարք թարգմանական տարբերակներ են առաջ գալիս հետեւյալ բնագրային հատվածը թարգմանելիս.

Պահապան ամենայնի Քրիստոս, աչ Քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, եւ ի գնալ ի ճանապարհի, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց:

Եւ ողորմեա Քո արարածոցս եւ ինձ՝ բազմամեղիս: (ԺԵ.)

Աչ քո (Ներսես Շնորհալի), սուրբ աջն (Կորյուն), թաթ ձեռին աջոյ (Մովսէս Խորենացի) միավորների ուսերեն տարբերակը *десница* միավորն է: Շնորհալու վերոհիշյալ տարբերակում էլ այն թարգմանվում է այսպես՝ *Всеохранитель Христос! Да будет мне сенью десница Твоя днем и ночью* (15): Անգլերեն բոլոր հնարավոր թարգմանական տարբերակներն են՝ *right hand, holy right, holy hand*, իտալերենում առավել շատ են այդ զուգորդումները, ինչպես՝ *destra, la mano della Luce, la mano di Dio, il suo braccio*:

Անշուշտ դժվար է մեկ ուսումնասիրության շրջանակներում բազմակողմանիորեն ներկայացնել «մշակութային փոխանցման» գործընթացը, սկզբունքներն ու օրինաչափությունները: Մեր ուսումնասիրությամբ հնարավոր է, թերեւս, եզրակացնել, որ «Հաւատով խոստովանիմ» աղոթքի թարգմանություններն ընթերցողին են փոխանցել հայ ազգային, հոգեւոր գրականության մի ուշագրավ խորախորհուրդ դրվագ՝ միաժամանակ առաջ քաշելով այնպիսի հարցադրումներ, որոնք թույլ են տալիս տեսաբաններին նորովի արժեւորել մեր գրական կոթողները: Եւ եթե աշխարհն այսօր խոնարհվում է Ներսես Շնորհալու բացառիկ տաղանդի առջեւ, ապա դա նաեւ թարգմանիչ-մեկնողների աշխատանքի շնորհիվ է, որը համապարփակ կարելի է լուսաբանել Գրիգոր Նարեկացու հետեւյալ իմաստախոսությամբ. «Որ գործովք միայն գրաւի, եւ ոչ ստեղծաբանութեամբ կաշառի» («Մատեան ողբերգութեան», Բան Բ.—Ա.):

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսես Շնորհալի, Հաւատով խոստովանիմ, թարգմանություն, մշակութային փոխանցում, մեկնաբանություն, լեզվական եւ արտալեզվական գործոններ:

РЕЗЮМЕ

Религиозно-философские труды Св. Нерсеса Шнорали (Нерсес Благодатный) всесторонне изучены десятками ученых и переведены на разные языки мира (более 36), занимая достойное место в мировой литературной и культурной сокровищнице.

Целью исследования выступает выявление культурного трансфера в сравнительном ключе на материале переводов (русский, английский, итальянский) молитвы «С Верою Исповедую» Св. Нерсеса Шнорали. Очевидно, что молитва имеет уникальную текстовую структуру, в которой Св. Нерсес Шнорали представляет двадцать четыре молитвы на каждый час дня.

В статье всесторонне освещены структурные и стилистические особенности молитвы, языковые и вне-языковые факторы переводческой деятельности, а также некоторые стратегические принципы трансфера. Обозначается спектр вопросов, связанных с изучением специфики перевода религиозно маркированных единиц в свете парадигмы культурного трансфера.

Методологическая основа статьи является концепция культурного трансфера, метод обратного перевода и традиционные для сравнительного литературоведения методики сопоставительного, текстологического и контекстуального анализа.

SUMMARY

The religious and philosophical works of St. Nerses Shnorali (Nerses the Gracious) were on the agenda of many scientists research works. His spiritual creativity was translated into many languages (more than 36), occupying its honorable place in the world literary and cultural heritage.

The purpose of the study is to carry out a research within the framework of St. Nerses Shnorali's prayer "I Confess with Faith" and to reveal the principles of cultural transfer through the prism of comparison between the original and the translations (Russian, English, Italian). One cannot fail to observe that the prayer has a unique textual structure in which St. Nerses Shnorali illustrates twenty-four prayers for each hour of the day.

The research comprehensively focuses on the structural and stylistic features of the prayer, the linguistic and extra-linguistic factors that influenced on the process of translation, as well as some strategic principles of transfer. A range of issues is outlined related to the translation peculiarities of the religiously marked units through the paradigm of the cultural transfer.

The methodological basis of the article covers - the concept of cultural transfer, the method of reverse translation, comparative literature, textual and contextual analysis.

